

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/7

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6113972 ակտի դեմ:

Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանի գանգատում բերված փաստարկները.

22.08.2015 թ-ին Առինջ առևտրի կենտրոնում գտնվող թիվ 304 տաղավարում իրականացվել է ստուգում, որի ընթացքում գրվել է ակտ, որ ՀԴՄ-ն անսարք վիճակում գտնվելու պայմաններում իրականացվել է առևտուր:

Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը նշում է, որ հարկային տեսուչները համոզվել են, որ իր ՀԴՄ-ն աշխատում է Վիվասելի քարտով և Առինջում կապը լավ չի աշխատում: Այդ պատճառով նա չի կարողացել մուտքագրել կատարված գնման գումարը, ինչպես նաև հարկային տեսուչները չեն կարողացել ՀԴՄ-ից դուրս բերել համապատասխան հաշվետվությունը:

Այնուհետև 15.09.2015 թ-ին Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը փոստով ստացել է կազմված ակտի օրինակը: Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը այցելել է հարկային տեսչություն, որտեղ իրեն ներկայացված փաստաթուղթը հրաժարվել է ստորագրել, քանի որ իրեն խաբված է համարել:

Հաշվի առնելով Առինջում կապի վատ որակը Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանն ամեն օր ՀԴՄ-ն տանում է տուն՝ հաշվետվությունը հանելու համար:

Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը նշում է նաև, որ արձանագրված խախտման մեջ բացակայում է իր մեղքը, հետևապես չի պատրաստվում (նաև չունի հնարավորություն) ոչ իր մեղքով կազմված ակտի համար վճարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը խնդրում է հարցին տալ լուծում:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.07.2015 թ-ի թիվ 6113972 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6113972 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Գևորգ Միքայելյանի կողմից 22.08.2015 թ-ին ժամը 13:20-ին Կոտայքի մարզ գ.Առինջ, Բ թաղ. 1-ին փ. թիվ 17 տաղ. 304 հասցեում գտնվող առևտրի կետից կատարվել է հսկիչ գնում 16000 դրամի չափով (10 հատ սրբիչ), որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Ռուզաննա Ջաքարյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և չի

տրամադրել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: ՀԴՄ-ից չի հաջողվել դուրս բերել Z հաշվետվություն, քանի որ ՀԴՄ-ի աշխատանքը խափանված է եղել: Գնված ապրանքները ստուգումն իրականացնող անձանց կողմից հետ է վերադարձվել տնտեսվարողին և հետ է ստացվել հսկիչ գնման գումարը:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: Արդյունքում Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ նախ հարկ է նշել, որ Ակտի 1-ին կետում նշված տեղեկությունները վկայում են այն մասին, որ ստուգումն իրականացնող անձանց կողմից Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի մոտ կատարվել է հսկիչ գնում:

Հսկիչ գնում իրականացնելու կարգը սահմանված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով, որի 1.2. կետի համաձայն հսկիչ գնումը համարվում է ուսումնասիրության տեսակ, իսկ 1.4. կետի համաձայն՝ հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.07.2015 թ-ի թիվ 6113972 հանձնարարագրով հանձնարարվել է Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի մոտ իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, հետևապես ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց իրավունք վերապահված չի եղել կատարել այնպիսի գործողություններ (հսկիչ գնում), որոնք նախատեսված են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով:

Բացի այդ, քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում իրականացված գնումը Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից հնարավոր չի եղել մուտքագրել ՀԴՄ՝ տվյալ տարածքում կապի որակը վատ լինելու հետևանքով: Նշված հանգամանքը հաստատվեց նաև ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ակտի 1-ին կետում նշված խախտման փաստի առկայության համար անհրաժեշտ պայման է, որպեսզի խախտումն Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից կատարված լինի մեղավորությամբ, ինչը, սակայն, քննարկվող դեպքում առկա չէ (բացակայում է Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի մեղքը), քանի որ ՀԴՄ կտրոն չտրամադրելը պայմանավորված է եղել բացառապես ծրագրային խնդիրներով՝ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանից անկախ հանգամանքների բերումով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.09.2015 թ-ի թիվ 6113972 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

